

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑԿՈՂ ՈՐԱԿՎՎՈՐՄԱՆ

ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ)

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակցի կողմից 10.01.2016 թվականին կազմված արձանագրության համաձայն՝ Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 բնակարանի պատշգամբին կից կատարվել է մոտ 4.2քմ ընդլայնում՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթի:

Քաղաքապետի 28.02.2016 թվականի «Բազմաբնակարան շենքերին կից (շենքերի ծավալից դուրս) ինքնակամ իրականացված կառույցներն օրինական ճանաչելու և շենքերի զբաղեցրած հողամասերը դրանց բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու մասին» թիվ 4444-Ա որոշման համաձայն՝ որոշման հավելվածի ցանկում նշված հասցեների, այդ թվում՝ Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 շենքին կից ինքնակամ կառույցները ճանաչվել են օրինական:

Վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի 09.03.2016 թվականի թիվ Վ-00/2 արձանագրության համաձայն՝ Քաղաքապետին է ներկայացվել առաջարկություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով Ա-ին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Քաղաքապետի 09.03.2016 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ Վ-16/1 որոշմամբ Ա-ին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանքի:

09.08.2016 թվականին Երևանի քաղաքապետարանը հայց է ներկայացնում Վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Ա-ին քանդել Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 բնակարանի պատշգամբին կից կառուցված ինքնակամ շինությունը և բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ վարչական տուգանք, տուգանքի վճարումը ուշացնելու յուրաքանչյուր օրվա դիմաց չվճարված գումարի 0,25 տոկոսի չափով տուգանք՝ մինչև փաստացի կատարման օրը, ինչպես նաև վճարված պետական տուրքը:

ՀԱՅՑՎՈՐԻ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Հայցվորը իր պահանջը հիմնավորել է նրանով, որ վարչական մարմինի 28.02.2016 թվականի թիվ 4444-Ա որոշմամբ ինքնակամ կառույցն օրինականացնելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ անձին վարչական պատասխանատվությունից ազատելու համար, քանի որ այն չի կարող բացառել պատասխանողի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում թույլ տալու հանգամանքը, իսկ ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին վարչական

մարմնի որոշումը նույնպես հաստատում է վերոնշյալ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով վերջինիս կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա հայցվորը պահանջել է պարտավորեցնել Ա-ին քանդել Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 բնակարանի պատշգամբին կից կառուցված ինքնակամ շինությունը և բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ վարչական տուգանք, տուգանքի վճարումը ուշացնելու յուրաքանչյուր օրվա դիմաց չվճարված գումարի 0,25 տոկոսի չափով տուգանք՝ մինչև փաստացի կատարման օրը, ինչպես նաև վճարված պետական տուրքը:

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Պատասխանողը առարկել է հայցադիմումում ներկայացրած փաստերի դեմ նշելով, որ անձը վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն իրավախախտում կատարելու դեպքում, հետևաբար, վարչական վարույթն իրականացնող մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել, թե արդյո՞ք առկա է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու բավարար հիմք, այն է՝ իրավախախտման դեպքը, արդյո՞ք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, այսինքն՝ առկա է վարչական իրավախախտման կազմ: Մինչդեռ սույն գործով Քաղաքապետն ինքնակամ շինություն կատարած լինելու փաստի հիման վրա Ա-ին ենթարկել է վարչական պատասխանատվության՝ անտեսելով իր իսկ կողմից 28.02.2016 թվականի թիվ 4444-Ա որոշմամբ արդեն իսկ այդ կառույցն օրինական ճանաչած լինելու հանգամանքը:

ՀԱՐՑԵՐ

ՀԱՐՑ 1

Իրավաչափ է արդյոք Քաղաքապետի 09.03.2016 թվականի թիվ Վ-16/1 որոշմամբ Ա-ին ենթարկվել վարչական պատասխանատվության, այն պայմաններում, երբ Քաղաքապետի 28.02.2016 թվականի թիվ 4444-Ա որոշման համաձայն՝ նույն որոշման հավելվածի ցանկում նշված հասցեների, այդ թվում՝ Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 շենքին կից ինքնակամ կառույցները ճանաչվել են օրինական:

ՀԱՐՑ 2

Արդյոք հիմնավոր է Երևանի քաղաքապետարանի որոշմամբ Ա-ի նկատմամբ 1.000.000 ՀՀ դրամ վարչական տուգանք նշանակելը, ինչպես նաև տուգանքի վճարումը ուշացնելու յուրաքանչյուր օրվա դիմաց չվճարված գումարի 0,25 տոկոսի չափով տուգանք նշանակելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի ներկայացրած պահանջը:

ՀԱՐՑ 3

Հիմնավոր է արդյոք Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 բնակարանի պատշգամբին կից կառուցված ինքնակամ շինությունը քանդելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի պահանջը, ինչպիսի որոշում պետք է կայացնի դատարանը:

ՀԱՐՑ 4

Սույն խնդրի շրջանակում քննարկել վարչական տույժեր նշանակելու մասին որոշումների կատարման վաղեմության հարցը:

ՀԱՐՑ 5

Համեմատե՞ք տվյալ իրավական խնդրի փաստական հանգամանքները ստորև ներկայացված փաստական հանգամանքների հետ: Նշե՞ք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև գնահատե՞ք, թե դրանցից որո՞նք են գործի լուծման համար էականները: Հիմնավորե՞ք պատասխանը:

ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակցի կողմից 10.01.2016 թվականին կազմված արձանագրության համաձայն՝ Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 բնակարանի պատշգամբին կից կատարվել է մոտ 4.2քմ ընդլայնում՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթի:

Վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի 09.03.2016 թվականի թիվ Վ-00/2 արձանագրության համաձայն՝ Քաղաքապետին է ներկայացվել առաջարկություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով Ա-ին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Քաղաքապետի 09.03.2016 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ Վ-16/1 որոշմամբ Ա-ին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամի չափով տուգանքի:

09.08.2016 թվականին Երևանի քաղաքապետարանը հայց է ներկայացնում Վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Ա-ին քանդել Աբովյան փողոցի թիվ 11ա շենքի թիվ 12 բնակարանի պատշգամբին կից կառուցված ինքնակամ շինությունը և բռնագանձել 200.000 ՀՀ դրամ վարչական տուգանք, ինչպես նաև վճարված պետական տուրքը: